

այլազգեաց եւ այլադէնից.– փափագելի մնայ 'ի յայտնութիւն: Այլ որ զինչ եւ էին պէտք Լեւոնի եւ օժանդակութիւն Ամաւրեայ, կարծեմ՝ թէ սրտագին եւս եղեն սորա կարիք եւ մեծագոյն եւս փոխարէն օգնականութեանն՝ զոր մատոյց նմա Լեւոն՝ յետ երից ամաց (1197). յորժամ հելլէն յելուզակն Գանաքի՝ յափշտակեաց գոշխոյն Եշիվա (առաջին կին Ամաւրեայ)՝ 'ի Պարատիզի գեղջ, 'ի ծովեզերս Կիպրոսի, հանդերձ մանկամբքն եւ կարասեաւ, եւ տարաւ յԱնտիոքեակ Կրագեան, առ Կիո Սահակ տէր քաղաքին. յորմէ ուժգին սպառնալեօք պահանջեալ թափեաց Լեւոն, եւ երէր գոշխոյն 'ի Կոռիկոս, հրաւիրեալ անդր միւսանգամ զԱմաւրի, եւ տուեալ նմա զգերեալ ընտանիսն, հանդերձ ընծայիւք. որպէս մանրագոյն եւս նշանակեալ եմք 'ի տեղագրին Անտիոքեակ քաղաքի:– Աւելորդ է ասել՝ եթէ քանի՛ սերտագոյնս պնդէին այսպիսի այցելութիւնք՝ զբարեկամութիւն պետացն արեւմտեայց ընդ Լեւոնի: Նաեւ 'ի վերջին ժամանակս կենացն՝ մինչ հաստատեալ էր 'ի թագաւորութեանն, ընդունէր նա (1218) հիւրամեծարութեամբ՝ զԱնդրեաս թագաւոր Ունգարաց 'ի դառնալ նորին 'ի Պոդոմայիդայ՝ երթալ յերկիր իւր. եւ ածեալ 'ի Տարսոն՝ հանգոյց բազում շքով եւ սպասու, ուր եւ դաշինք խնամութեան եղեն ընդ որդիս իւրեանց:– Քաջ գիտէր Լեւոն, որ հասարակաց է գիտելի, թէ քանի՛ հզօր են կապանք ազգախառնութեանց 'ի պահպանութիւն պետութեանց եւ 'ի հաշտութիւն թշնամեաց. յայն սակս (որպէս բազում անգամ յիշեցաւ), էառ նախ ինքն կին յԱնտիոքեայց մերձաւոր կասկածելեացն, ապա եւ զԱնտիոքայ պայազատն՝ փեսայացոյց 'ի թոռնագիր իւր. յետոյ խնամեցաւ երկրորդ մերձաւորացն՝ որ են Կիպրացիք, զդստերս թագաւորի նոցա առեալ՝ զմին իւր կին, եւ զմիւսն տուեալ Ռուբինի-Ռեմունդի թոռնագրին իւրոյ:– Դարձեալ, յօդեցաւ եւ ընդ վեհագունի պետաց կողմանցն՝ ընդ Երուսաղեմացոյն, տալով զդուստր իւր Ռիթա զծնեալն յանտիոքացոյն՝ 'ի կնութիւն Յովհաննու Պրիենայ՝ անուանելոյ թագաւորի Երուսաղեմի: Այսպէս ընդ երեսին գլխաւոր պետութիւնս արեւմտեայց՝ շաղկապեալ արենակցութեամբ, յաւել եւ 'ի չորրորդն, (անցեալ ընդ անջրպետ այլադէն դրակցին Իկոնիացւոյ), ընդ նորընծայ յոյն կայսերն Նիկիոյ՝ Լասգարեայ, հարսնացուցանելով նմա զմիւս թոռնիայն իւր զՓիլիպպինէ, որպէս վերագոյնդ նշանակեցաք: Այսոքիկ էին հզօրագոյն պետութիւնք քրիստոնէայք՝ փոքր 'ի շատէ մերձաւորք նմին. իսկ այլ իշխանութիւնք, պարոնութիւնք եւ կոմսութիւնք՝ թէ եւ ազնուականք, նուաստագոյնք եւ նուազագոյնք համարեալ էին. ընդ